



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՄՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

**ԵԿՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՏԵԳՐԱՆ ՆՈՐ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Համաշխարհային գործընթացներն ստիպում են անցումային տնտեսություն ունեցող երկրներին փնտրել ու գտնել համագործակցության նոր մոդելներ և ուղիներ մաքսային, արժույթային, տնտեսական միությունների ստեղծմամբ: 2013 թ. Հայաստանի Հանրապետությունը նույնպես հայտնեց միասնական տնտեսական տարածքին ինտեգրվելու իր պատրաստակամությունը: Հոդվածում լուսաբանված են Եվրասիական ինտեգրման գործընթացների զարգացման հիմքերը: Հիմնավորվել են հետխորհրդային տարածաշրջանում միասնացման գործընթացների արագացման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ հիմքերը: Վերլուծվել է Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ ինտեգրման մակրոտնտեսական էֆեկտը:

Հիմնաբառեր. Եվրասիական տնտեսական տարածաշրջան, Մաքսային միություն, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիա, ինտեգրման մոդել, արտաքին առևտրաշրջանառություն, մրցակցային դիրք, կապիտալի ազատ շարժ, ԱՊՀ երկրներ

JEL: F00, F13, F15, F32

Համաշխարհային տնտեսության զարգացման միտումը տարածաշրջանային տնտեսական միասնացումն է, որը դրսևորվում է երկրների միջև ինտեգրման հարաբերությունների նոր մոդելներ կառուցմամբ: Այդ երկրները ծագում են մեկտեղել իրենց ազգային տնտեսությունները համաշխարհային տնտեսական կապերի միասնական համակարգում խմբավորումներ և միավորումներ ստեղծելու ճանապարհով: Փոխազդեցության նման ուղին այսօր շատ արդյունավետ է, ինչը թույլ է տալիս միասնացող երկրներին ստեղծել

հարաբերությունների առանձնահատուկ մոդել ազատ առևտրի, մաքսային միությունների և միասնական տնտեսական տարածաշրջանի միջոցով:

Եվրասիական տարածաշրջանի երկրների կայուն տնտեսական զարգացման հեռանկարները սերտորեն կապված են փոխազդեցության բարձր արդյունավետություն ապահովող հավասարակշռված համակարգերի միջոցով տնտեսությունների ինտեգրման հետ: Վերջին ժամանակներում համագործակցության հիմնախնդիրը բավական ակտիվ քննարկվում է հետխորհրդային ժամանակաշրջանի երկրներում, որի շրջանակներում բացառություն չի կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը: Դա այժմեական գլխավոր մարտահրավերներից է, որը թույլ կտա տարածաշրջանի բարեկեցությունն ապահովելու նպատակով փնտրել և գտնել փոխշահավետ համագործակցության արդյունավետ ուղիներ: Անկասկած, դրա համար պահանջվում են համատեղ արդյունավետ ջանքեր:

Կառուցելով ինտեգրման մոդելներ՝ շատ կարևոր է կանխատեսել ապագան, այն հեռանկարները, որոնք կբացվեն միավորվող բոլոր մասնակիցների առջև: Ներկայումս, չնայած բավականաչափ բարդություններին, ինտեգրման եվրասիական ուղին ակնհայտ է ու տեսանելի և ապրում է իր աստիճանական զարգացումը: Հատկանշական է, որ դրանով հետաքրքրված են ոչ միայն ԱՊՀ տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում:

Այսօր չափազանց կարևոր է կանխատեսել եվրասիական ինտեգրման ինչպես մոտակա, այնպես էլ հեռահար արդյունքները: Համագործակցության շրջանակներում ամեն մի պետություն ինքն է լուծում իր մասնակցության հետ կապված հիմնահարցերը:

Կարելի է ասել, որ Եվրասիական տնտեսական միությունն իրականություն է դարձել: Այս պարագայում մենք արդեն կարող ենք և պետք է ընդլայնենք համագործակցությունը ԱՊՀ բոլոր երկրների հետ: Միաժամանակ, Եվրասիական զարգացման բանկի, Հակաձգնաժամային ֆոնդի հնարավորությունները, ինչպես նաև էներգետիկ ռեսուրսների՝ ավելի ցածր գներով հասանելիությունը մեծացնում են միասնական տնտեսական տարածաշրջանի գրավչությունը:

Հարկ է սակայն նկատել, որ աշխարհում ոչ բոլորն են ողջունում եվրասիական ինտեգրման ընդլայնումը: Դա, հասկանալի է, ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Համաշխարհային շուկայում, ի դեմս մաքսային միության, հայտնվում է նոր աշխարհաքաղաքական միավոր, և դրա հետ մրցակցությունը կարող է ոչնչացնել տարածաշրջանային միասնացման այլ կառույցների մենաշնորհը: Չպետք է նաև մոռանալ, որ Եվրասիական տնտեսական միության արտաքին հակառակորդների փաստարկները շատ բանով հիմնվում են հենց եվրոպական և եվրասիական միավորումների հակառակ ուղղվածության վրա: Սակայն Եվրոպան, լայն առումով, Եվրասիայի մի մասն է, իսկ դա նշանակում է, որ պատմական հեռանկարում զարգացման եվրոպական ուղղությունը կդառնա եվրասիական գործընթացների բաղկացուցիչը:

2010 թ. հունվարի 1-ից Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Դա-գախստանի միջև ձևավորվեց մաքսային միություն, որի շրջանակներում որպես կարգավորման գործիք են ծառայում միասնական մաքսային օրենսդրությունը և մաքսասակագնային կարգավորման քաղաքականությունը: Մաքսային միության սահմաններում ձևավորված մաքսային օրենսդրությունը

համապատասխանում է մաքսային գործի զարգացման ժամանակակից միտումներին, օպտիմալացնում է արտաքին առևտրի խթանմանն ուղղված մաքսային գործարքները:


Ազատ առևտրի իրական ռեժիմի սահմանումը ապահովում է միության մեջ մտնող երկրների ապրանքաշրջանառության ծավալների աճը: Առաջին երկու տարիների ընթացքում արդեն իսկ տեսանելի դարձան միության դրական արդյունքները՝ այդ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապված: Միության անդամ երկրների արտաքին ապրանքաշրջանառության համախառն ծավալը, երրորդ երկրների հետ համեմատած, 2012 թ. առաջին կիսամյակում կազմեց 459,6 մլրդ դոլար, այդ թվում. ապրանքների արտահանումը՝ 302,9 մլրդ դոլար, ներմուծումը՝ 156,7 մլրդ դոլար: 2011 թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատած, արտաքին ապրանքաշրջանառության ծավալն ավելացել է 8%-ով, արտահանմանը՝ 9,7%-ով, ներմուծմանը՝ 4,8%-ով: Ընդհանուր առմամբ, արտաքին առևտրի հավելուրդը կազմեց 146,2 մլրդ դոլար¹:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության հիմնահարցերին՝ կարևոր է հասկանալ, որ համագործակցության նոր մոդելներ ընտրելիս անհրաժեշտ է խուսափել համագործակցության արդեն իսկ գոյություն ունեցող ձևերի կրկնօրինակումից:

Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հարցը առաջին հերթին պետք է դիտարկել դրանից բխող տնտեսական արդյունքների տեսանկյունից: Փաստարկներից մեկն այն է, որ այս միությանը անդամակցելիս կբարձրանա հանրության բարեկեցության աստիճանը. դա կապահովվի ներսահմանային սակագների վերացմամբ, մաքսային միության երկրներում արտադրված և ներմուծվող ապրանքների գների անկմամբ, ինչպես նաև պետական բյուջե հարկային մուտքերի ավելացմամբ՝ պայմանավորված առևտրաշրջանառության ծավալների ընդլայնմամբ: Սակայն ավելի հանգամանալից վերլուծություն իրականացնելիս ակնհայտ է դառնում, որ, ելնելով ՀՀ տնտեսության հիմնախնդիրներից և կառուցվածքային առանձնահատկություններից, էական դրական արդյունք ակնկալելը դեռևս վաղ է: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալները վկայում են այդ մասին: Ըստ գծապատկեր 1-ի՝ հայրենական արտահանման կառուցվածքը քիչ է բազմազանեցված և սահմանափակված է ավելացված արժեքի ցածր մակարդակ ունեցող որոշակի ապրանքախմբերով, որոնց շրջանակում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում մրգերն ու բանջարեղենը, ծխախոտն ու դրա արդյունաբերական փոխարինիչները, աղը, ծծումբը, սվաղման նյութերը, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերը, ալյումինն ու դրանից պատրաստված իրերը, բնական և արհեստական մորթին, հանքաքարը, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներն ու քացախը: Հատկանշական է, որ ապրանքների ներկայացված խմբաքանակն ունի մասնագիտացման բարձր մակարդակ հայրենական տնտեսությունում: Դա նշանակում է, որ ներկայումս ՀՀ արտաքին առևտուրը զարգանում է տնտեսության տվյալ ձյուղերի սահմաններում, իսկ մասնագիտացմանն ուղղվածությունը փոփոխելու համար

¹ Стен Аналитические материалы Евразийской экономической комиссии. Об итогах внешней торговли государств-членов Таможенного союза в январе 2011-июне 2012 г. // http://www.tsouz.ru/db/stat/Analitika/Documents/Analytics_E_201206.pdf

պահանջվում են համակարգային և կառուցվածքային մի շարք վերափոխումներ:



Գծապատկեր 1. ՀՀ արտահանման կառուցվածքը 2014 թ.²

Այդուհանդերձ, մասնագիտացման բարձր մակարդակ ունեցող ապրանքների մեծ մասն արտահանվում է երրորդ երկրներ: ԱՊՀ երկրներ արտահանվում են հանքաքար և մոխիր, ալյումին և դրանից պատրաստված իրեր, ծխախոտ և դրա արդյունաբերական փոխարինիչներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մրգեր և բանջարեղեն, սակայն փոքր ծավալներով: Վերոնշյալ ապրանքախմբերից ԱՊՀ երկրներ արտահանման բարձր մասնագիտացում ունի միայն «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախումբը: 2014 թ. այդ ապրանքախմբից նշված երկրներ արտահանվել է 67877,2 տ, իսկ այլ երկրներ՝ 12164 տ: Այսպիսով՝ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ընթացիկ կառուցվածքը կողմնորոշված է առավելապես դեպի երրորդ երկրներ, իսկ առևտրի իրականացման ներուժը դեռևս բավական ցածր մակարդակում է:

Ինտեգրացիոն միավորում կազմող երկրների համար չափազանց կարևոր է նաև բնակչության եկամուտների մակարդակը: Սկսած 1998 թվականից՝ Հայաստանի Հանրապետությունում նկատվում է իրական ՀՆԱ ծավալների աճ, սակայն 2009-ին դա կրճատվեց 14.1 տոկոսով: Վերջին տարիների ՀՀ տնտեսական աճի հիմքը ապրանքների արտահանումն է՝ թեև փոքր ծավալներով, սակայն աճող ներքին պահանջարկը, ըստ մասնավոր սպառման, ապահովվում է արտասահմանում՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում աշխատող միգրանտների դրամական փոխանցումների հաշվին:

Եթե դիտարկենք Հայաստանի մրցակցային դիրքը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում (աղյուսակ 1), ապա մեր հանրապետությունը ութ պետությունների շարքում գտնում է 4-րդ հորիզոնականում, այսինքն՝ մրցակցային առավելությունը, կապված վերոնշյալ ցուցանիշի հետ, դեռևս ցանկալի մակարդակում չէ:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), էջ 53–56, 70–73:

Աղյուսակ 1

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ԵՏՄ երկրներում 2014-2016 թթ.³
ըստ գնողունակության համարժեքության (դոլար)

Երկիր	2014	2015	2016 (կանխատեսում)
Ռուսաստան	13872	9054	7742
Ղազախստան	12505	9795	6471
Բելառուս	8041	5749	4855
Հայաստան	3900	3534	3602
Ուկրաինա	2924	2004	1854
Ուզբեկստան	2061	2120	1966
Մոլդովա	2243	1804	1712
Դրոգստան	1266	1112	995

Զնայած վերոնշյալ խնդիրների առկայությանը, ՀՀ միասնացումը Եվրասիական տնտեսական միությանը, կարծում ենք, ավելի գերադասելի է, քան զարգացման այլ ուղի ընտրելը, քանի որ ներկայումս մեր հանրապետությունը կնքում է աշխատանքային ռեսուրսների և կապիտալի ազատ շարժ ապահովող համաձայնագրեր, որոնք այսօր չափազանց կարևոր են ՀՀ տնտեսական զարգացման համար: Հայաստանյան տնտեսության նորօրյա կառուցվածքը, դրանում տեղի ունեցող արմատական փոփոխությունները շատ բանով կախված են տրանսֆերտների ծավալներից, ինչը, մի կողմից՝ խթանում է ներմուծվող ապրանքների և ծառայությունների վերջնական սպառումը, իսկ մյուս կողմից՝ զարգացնում է տրանսպորտի, կապի, շինարարության, ծառայությունների ոլորտները: Տրանսֆերտների նվազման դեպքում փոխարժեքի հետ կապված հիմնախնդիրները, ներմուծման կրճատումը իրենց բացասական ազդեցությունը կթողնեն տնտեսության տարբեր ճյուղերի վրա, և, այս ամենի հետ կապված, առանց Եվրասիական տնտեսական միությանն ինտեգրվելու, մեր հանրապետությունը կհայտնվեր փակուղում:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թ. /ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման/:
2. Аналитические материалы Евразийской экономической комиссии. Об итогах внешней торговли государств-членов Таможенного союза в январе 2011 – июне 2012 г., http://www.tsouz.ru/db/stat/Analitika/Documents/Analytics_E_201606.pdf
3. Глазьев С. Ю., Итоги и перспективы развития интеграционных процессов на постсоветском пространстве, http://www.glazev.ru/econom_polit/295/
4. Истомин С. И., Кожанков А. Ю., О некоторых вопросах разработки проекта Таможенного союза. М., “Таможенное дело”, N4, 2008.
5. Мансуров Т., 10 лет реальной интеграции. М., “Известия”, 8 окт., 2010, <http://svspb.net/danmark/vvp-stran-na-dushu-naselenija.php>

³ Տե՛ս <https://ru.wikipedia.org>

ЭММА КАРАПЕТЯН

Ассистент кафедры Международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

Евразийское экономическое сообщество в новых условиях интеграции.–

Процессы мировой экономической глобализации подталкивают страны с переходной экономикой к поиску новых форм и моделей взаимодействия в виде таможенных, валютных и экономических союзов. В 2013 г. РА объявила о своей готовности вступить в Единое экономическое пространство. В статье рассмотрены эволюционные основы евразийских интеграционных процессов. Обоснована необходимость и объективная основа усиления интеграционных процессов на постсоветском пространстве. Проанализирован макроэкономический эффект взаимодействия Республики Армения с Евразийским экономическим сообществом.

Ключевые слова: *Евразийское экономическое пространство, Таможенный союз, региональная экономическая интеграция, интеграционная модель, оборот внешней торговли, конкурентная позиция, свободное движение капитала, страны СНГ.*

JEL: F00, F13, F15, F32

EMMA KARAPETYAN

Assistant at the Chair of International Economic Relations at ASUE, PhD in Economics

Euroasian Economic Union in New Integration Conditions.–

The processes of world economic globalization are pushing countries with transitional economies to search for new forms and models of integration within customs, currency and economic unions. In 2013 Armenia declared its readiness to join the Single Economic Space. The evolutionary bases of Eurasian integration processes are described in the given paper. The necessity and objective basis to strengthen the integration processes in the Post-Soviet space are substantiated. The macroeconomic effect of interaction of the Republic of Armenia with the Eurasian Economic Community is analyzed.

Key words: *Eurasian Economic Space, Customs Union, regional economic integration, integration model, foreign trade turnover, competitive position, free movement of capital, CIS Countries.*

JEL: F00, F13, F15, F32